ՀԱՎԵԼՎԱԾ N 37
ՀՌՀ գլխավոր քարտուղարի
03.01.2022թ թիվ 2-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի տեսալսողական մեդիայի գործունեության վերլուծության և մեթոդաբանության բաժնի ավագ վերլուծաբան (ծածկագիր՝ 44-20.2.6-Մ3-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) տեսալսողական մեդիայի գործունեության վերլուծության և մեթոդաբանության բաժնի (այսուհետ՝ Բաժին) ավագ վերլուծաբանը (այսուհետ՝ Ավագ վերլուծաբան) անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի անվանումը

Ավագ վերլուծաբանի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը:

1.4 Աշխատավայրը

Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Իսահակյան 28

2. Պաշտոնի բնութագիրը

2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Մասնակցում է Հանձնաժողովի գործունեությանը և լիազորություններին համապատասխան իրականացված բոլոր բաղադրիչների վերաբերյալ ամբողջական տեղեկությունների և վիճակագրական տվյալների ուսումնասիրման մեթոդաբանության կազմմանը (մշակմանը).
2. վերլուծում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների և օպերատորների կողմից Հանձնաժողով ներկայացվող տեղեկատվությունը.
3. իրականացում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից մեդիա ոլորտի վիճակագրական աշխատանքների նախագծումը.
4. դիստրիբյուտորների ներկայացված տեղեկատվության հիման վրա վերլուծում է

օտարերկրյա և հայերեն տեսալսողական ծրագրերի համամասնությունները.

5. իրականացնում է Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված տեղեկատվության վերլուծություն.
6. իրականացնում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների, օպերատորների և դիստրիբյուտորների ներկայացված տեղեկատվության վիճակագրության վարումը.
7. պատրաստում և կատարելագործում է Հանձնաժողովի մյուս կառուցվածքային ստորաբաժանումներից վիճակագրական տվյալների ստացման վերաբերյալ հարցաշարերը.
8. մասնակցում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների, օպերատորների և դիստրիբյուտորների վերաբերյալ վերլուծական տվյալների հաշվետվության ներկայացմանը Հանձնաժողովի նախագահին.
9. ներկայացնում է Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների բարելավման առաջարկություններ՝ հիմք ընդունելով հավաքագրված վիճակագրական տվյալները.
10. մասնակցում է տեսալսողական մեդիայի ոլորտի վիճակագրական տեղեկատվության ապահովմանը՝ տեսալսողական ոլորտի քաղաքականության մշակման համար.
11. իրականացնում է տեսալսողական մեդիայի ոլորտի վիճակագրության պատշաճ կատարման խոչընդոտների վերհանման աշխատանքները և ներկայացնում լուծման առաջարկներ.
12. մասնակցում է տեսալսողական մեդիա ոլորտի միջազգային փորձի ուսումնասիրմանը և Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքների բարելավման նպատակով համապատասխան առաջարկների ներկայացմանը.
13. վարում է տեսալսողական մեդիա ոլորտին վերաբերվող օգտակար հղումների, հրապարակումների, գրքերի, գիտական աշխատությունների շտեմարանը:

Իրավունքները՝

- Բաժնի պետից ստանալ անհրաժեշտ տեղեկություն, փաստաթղթեր. տեսալսողական մեդիածառայություն մատուցողների և օպերատորների կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը, ըստ անհրաժեշտության՝ մեդիածառայություն մատուցողներից, օպերատորներից, Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներից պահանջել լրացուցիչ տեղեկատվություն, անցկացնել հարցումներ, մասնակցել Բաժնի գործառույթներին առնչվող խորհրդակցություններին, աշխատանքային քննարկումներին:

Պարտականությունները՝

- հավաքագրել, ուսումնասիրել և վերլուծել տեսալսողական մեդիածառայություն մատուցողների, օպերատորների, դիստրիբյուտորների կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը, համեմատել լիցենզավորման հայտերում, դիմումին կից փաստաթղթերում նշված տեղեկությունների հետ, կազմել տեղեկանքներ,

հաշվետվություններ՝ ըստ տարբեր բաղադրիչների և ժամանակահատվածների, ըստ՝ օտարերկրյա և հայերեն տեսալսողական ծրագրերի համամասնությունների, ուսումնասիրել և վերլուծել հեռարձակված տեսալսողական ծրագրերը՝ ըստ թեմատիկ ուղղվածության, հավաստի տեղեկատվության ապահովման, կարևոր իրադարձությունների լուսաբանման ուղղությունների, նախապատրաստել եզրակացություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ բազմակարծության ապահովման, հավասարության պահպանման, հայերեն լեզվի պահպանման վերաբերյալ, վերլուծել Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացված տեղեկատվությունը՝ ըստ արձանագրված խախտումների, հարուցված վարչական վարույթների, կիրառված վարչական տույժերի և ներկայացնել առաջարկներ տեսալսողական մեդիայի ոլորտի կարգավորման խնդիրների հայտնաբերման ուղղությամբ, ուսումնասիրել և վերլուծել տեսալսողական մեդիա ոլորտի կարգավորման միջազգային փորձը և նախապատրաստել աշխատանքների կազմակերպման մոդելների վերաբերյալ տեղեկանքներ.

- վիճակագրական տվյալների հավաքագրման համար նախապատրաստել հարցաշարեր, անցկացնել հարցումներ, թարմացնել շտեմարանի նյութերը.
- նախապատրաստել զեկուցագրեր, գրություններ և մեթոդական ուղեցույցներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1 Կրթությունը, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն:

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի իր գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վիճակագրության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4.Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաները՝

1. Բանակցությունների վարում
2. Ժամանակի կառավարում
3. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված՝ մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում::

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: